ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 05

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 12.11. 2021թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին ռեկտորատի 16 (տասնվեց) անդամից 13-ը (տասներեքը):

Նիստին մասնակցում էին՝

1.Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ,
2. Գ. Նիկողոսյան՝ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
3. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ,
4. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
5. Ա. Սարգսյան՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
6. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն,
7. Վ. Խաչատրյան՝ արհեստակցական կազմակերպության նախագահ,
8. Թ.Խաչատրյան՝գրադարան ուսումնա գիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն,
9. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսագիտական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ,
10. Ա. Մկրտչյան՝ ռազմական ամբիոնի պետ,
11. Լ. Մարտիրոսյան՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի ՊԿ
12. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
13. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկանի,
14. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան,
15. Ա. Հովհաննիսյան՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

1. Ս/թ նոյեմբերի 15-ից ուսումնական գործընթացի կազմակերպման մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ՝ Ե. Սերոբյան

1.ԼՍԵՑԻՆ՝

Ս/թ նոյեմբերի 15-ից ուսումնական գործընթացի կազմակերպման մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ ս/թ նոյեմբերի 15-ից ուսումնական գործընթացի կազմակերպումն իրականացնելու համար ստացվել է ԿԳՄՍ նախարարի գրությունը, որով առաջարկվում է ուսումնական գործընթացը կազմակերպել առկա ուսուցմամբ /ըստ անհրաժեշտության համապատասխան դասընթացների համար ուսումնական պլանով նախատեսված դասախոսության ժամերը կարող են կազմակերպվել հեռավար /առցանց ձևով//:

Պարոն Սերոբյանը նշեց, որ գրությամբ նախազգուշացվում է, որ միաժամանակ ուսումնական գործընթացը կազմակերպելիս անհրաժեշտ է խստագույնս պահպանել կորոնավիրուսային հիվանդության /COVID-19/ տարածման կանխարգելման նպատակով կիրառվող սանիտարական կանոնները և անհրաժեշտ անվտանգության երաշխիքները:

Այնուհետև պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ իրեն ուղղված դիմում է ստացվել նաև ուսանողական խորհրդի նախագահությունից՝ ի դեմս ՈՒԽ նախագահ Գևորգ Ղուկասյանից, որտեղ նշվում է, որ հաշվի առնելով վերջին շրջանում կորոնավիրուսային հիվանդության և նոր Դելտա շտամով վարակվածների թվի կտրուկ աճը ՀՀ-ում, նաև վիրուսային հիվանդության երիտասարդացումը և երիտասարդների հաճախակի վարակման և մահացության դեպքերը, ինչպես նաև գիտակցելով հանրային առողջության պահպանման կարևորությունը՝ ՇՊՀ-ի ՈՒԽ-ի նախագահությունը համապատասխան կանոնադրական դրույթների և իր լիազորությունների, որոշում է կայացրել դիմել բուհի ռեկտորին ՇՊՀ-ում հեռավար ուսուցումը երկարաձգելու և բոլոր կրթական աստիճանների /առկա, հեռակա/ և մասնագիտական ծրագրերի ուսուցումը հեռավար կազմակերպելու համար սույն թվականի նոյեմբեր ամսվա առաջին կեսից մինչև 2022թ.-ի փետրվար ամսվա առաջին կեսը:

Պարոն Սերոբյանը նշեց, որ ս/թ նոյեմբերի 15-ից ուսումնական գործընթացի կազմակերպման համար ռեկտորատի անդամներն արտահայտեն նաև իրենց կարծիքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Վ. Խաչատրյանը, ում կարծիքով նոյեմբերի 15-ից ուսումնական գործընթացի կազմակերպումը ցանկալի է շարունակել առկա ձևով՝ և՛ հեռակա, և՛ առկա համակարգերում:

Ռ. Մարդոյանն առաջարկեց, որ հեռակա համակարգի ուսանողների ուսումնական գործընթացի կազմակերպումը ս/թ նոյեմբերի 15-ից իրականացնել առկա, իսկ առկա համակարգի ուսանողներրի ուսումնական գործընթացը երկարաձգել առցանց ուսուցմամբ՝ դեկտեմբերի 1-ից արդեն կազմակերպել առկա ձևով, երբ հեռակա համակարգի ուսանողների ուսումնական գործընթացը ավարտված կլինի: Մարդոյանի կարծիքով այդ պարագայում սանիտարական պահանջների վերահսկումն ու պահպանումը բուհում ավելի դյուրին կլինի:

Ա. Մկրտչյանն առաջարկեց ուսումնական գործընթացը նոյեմբերի 15-ից շարունակել առկա ձևով:

Օֆ. Հովհաննիսյանն ասաց, որ ինքը կողմ է տիկին Մարդոյանի առաջարկի հետ:

Թ. Մելիքյանի կարծիքով, այլ բուհերում նոյեմբերի 15-ից հեռավար ուսուցումը շարունակվում է, ուստի կարելի է ՇՊՀ-ում նույնպես շարունակել հեռավար ձևով ուսումնական գործընթացը, մինչև վարակվածների թվի հետ կապված փոփոխությունները:

Սերոբյանն արձագանքեց, որ ուրիշ բուհերի փորձի հետ իրենք գործ չունեն, այլ ուսուցման գործընթացի շարունակական կազմակերպումը հիմնավորվում է նախարարի իրենց ուղղված գրությամբ:

Ն. Ավետիսյանի կարծիքով ուսումնական գործընթացը կարելի է շարունակել հիբրիդային եղանակով առկա և հեռակա համակարգերում՝ կիրառելով ըստ անհրաժեշտության:

Գ. Նիկողոսյանի կարծիքով ուսումնական գործընթացի շարունակական կազմակերպման ձևը անկախ ուսուցման ձևից և կուրսերից, նույն ձևով պետք է

իրականացնել համաչափություն պահպանելու համար, քանի որ վտանգը բոլորի համար էլ առկա է:

Ա. Սարգսյանը կողմ էր Գ. Նիկողոսյանի կարծիքի հետ:

Կ. Պետրոսյանը համաձայն էր Ռ. Մարդոյանի կարծիքի հետ:

Լ. Մարտիրոսյանն առաջարկեց ուսումնական գործընթացը նոյեմբերի 15-ից շարունակել առկա ձևով մեկ շաբաթ, այնուհետև ըստ իրադրությունների զարգացման կողմնորոշվել, մնա՞լ առկա ուսուցմամբ, թե՞ անցնել առցանցի:

Պարոն սերոբյանը ամփոփեց կարծիքների քննարկումը, հանձնարարեց արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն Հ. Մելքոնյանին ՇՊՀ-ի կայքով և սոցիալական ցանցով հայտարարություն տարածել, որպեսզի ուսանողները տեղեկացվեն, որ **նոյեմբերի 15-ից ՇՊՀ-ում ուսումնական գործընթացը բակալավրի կրթական ծրագրերում (առկա և հեռակա) իրականացվելու է առկա(լսարանային) ձևաչափով:**
Մագիստրոսական կրթական ծրագրերի 1-ին կուրսերում՝ ս.թ. հոկտեմբերի 18-26-ն ընկած ժամանակահատվածում իրականացված ձևաչափով:

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ	Գ. Նիկողոսյան
ՈՒսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ	Ն. Ավետիսյան
Ռեկտորի օգնական՝ Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ս. Շահպարոնյան Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS	Թ. Խաչատրյան

կենտրոնի տնօրեն՝

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանիի ՊԿ՝	Լ. Մարտիրոսյան
Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան՝	Թ. Մելիքյան
Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝	Ռ. Մարդոյան
Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝	Օ. Հովհաննիսյան
Ռազմական ամբիոնի պետ՝	Ա. Մկրտչյան
Անձն.կառ.և իրավ.ապահովման բաժնի պետ՝	Ա. Հովհաննիսյան